# «ՍԵՅՍՄԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ

ք.Երևան, Փ.Բյուզանդի փող.1/3, 6-րդ հարկ

հեռ. (093) 56-12-22

## *ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ Փ197-19*

***«Դվին հնավայրի բնակելի հատվածի (տան) ամրակայում, նորոգում, վերականգնում, օգտագործում և տարածքի մասնակի բարեկարգում, ՀՀ Արարատի մարզ, Հնաբերդ (Վերին Դվին) համայնք հասցեում» նախագծանախահաշվային փաստաթղթերի***


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ

ԼԻՑԵՆԶԻԱ

12596

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ [illegible] ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
(ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ [illegible])

Տրված է « 21 նոյեմբերի 2008թ.» «ՍԵՅՍՄԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ, 375070, ք. ԵՐԵՎԱՆ, ՆՈՐՔԻ 17 փող, տուն 35/1

Գործողության ժամկետը՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
(անուն, ազգանուն)

Կ.Տ.

*ԵՐԵՎԱՆ – 2019*

# «ՍԵՅՍՄԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ

ՊԵՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 12596

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ ______ Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

«23» հուլիսի 2019թ.

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ Փ197-19

### *«Դվին հնավայրի բնակելի հատվածի (տան) ամրակայում, նորոգում, վերականգնում, օգտագործում և տարածքի մասնակի բարեկարգում, ՀՀ Արարատի մարզ, Հնաբերդ (Վերին Դվին) համայնք հասցեում» նախագծանախահաշվային փաստաթղթերի*

*Նախագծող՝* *«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ*

*Կառուցապատող՝* *ՀՀ Մշակույթի նախարարություն*

*Նախագծման հիմքը՝ ՀՀ Մշակույթի նախարարության կողմից տրված նախագծային առաջադրանք:*

## *Ճարտարապետաշինարարական մաս*

Փորձաքննության է ներկայացված ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ (Վերին Դվին) համայնքում գտնվող Դվին հնավայրի բնակելի հատվածի (տան) ամրակայման, նորոգման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման աշխատանքային նախագիծը:

Նախագծով նախատեսված է կատարել հուշարձանի ամրակայման և տարածքի բարեկարգման աշխատանքներ: Պատերի պահպանված հատվածները և հատակի սալերը նախատեսված է ծածկել քաթանով (սավանով) ամրակայել կավաշաղախով, իսկ ամբողջ տարածքը ծածկել տոփանված խճավազային շերտով: Պատերի ուրվագծով, խճավազային շերտի վրա նախատեսված է իրականացնել երկաթբետոնե սալ, որի վրա 20սմ բարձրությամբ կոպտատաշ բազալտով վերարտադրել սենյակների հատակագծերը:

Նոր շարվող քարերը նախատեսված է տաշել ձեռքի գործիքներով:

Հուշարձանը դիտելու համար նախատեսված է իրականացնել մոտեցման անցուղիներ, 70սմx70սմ չափերի բետոնե սալերով, տեղադրված տոփանած ավազի շերտի վրա:

Նախագծով նախատեսված է նաև քարի շարվածքներ, քիվաքարերի, աստիճանների, պատվանդանների վերաշար և այլ ճարտարապետական փոքր ձևերի վերամշակում:

Նախագծի ճարտարապետաշինարարական մասը կատարված է համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող շին. նորմերին ու կանոններին համապատասխան:

Նախագծի ճարտարապետաշինարարական մասի վերաբերյալ դիտողություններ չկան: Այն երաշխավորվում է համաձայնեցման:

## *Շինաշխատանքների կազմակերպում մաս*

Փորձաքննության է ներկայացված ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ (Վերին Դվին) համայնքում գտնվող Դվին հնավայրի բնակելի հատվածի (տան) ամրակայման, նորոգման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման աշխատանքային նախագծի շինաշխատանքների կազմակերպում մասը:

Նախագծով նախատեսված է շին. աշխատանքների կազմակերպումը իրականացնել երկու փուլով՝ նախապատրաստական և հիմնական:

Նախապատրաստական փուլում կատարվում են.

-շին.հրապարակի ժամանակավոր ցանկապատում,

-ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում,

-շին.նյութերի ընդունման հարթակների պատրաստում,

-շին.հրապարակի գիշերային լուսավորություն,

-տեղեկատվական ցուցանակի տեղադրում:

Հիմնական փուլում կատարվում են նախագծով նախատեսված վերանորոգման և մասնակի բարեկարգման աշխատանքները:

Նախագծի շինաշխատանքների կազմակերպում մասը կատարված է համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող շին. նորմերին ու կանոններին համապատասխան:

Նախագծի շինաշխատանքների կազմակերպում մասի վերաբերյալ դիտողություններ չկան: Այն երաշխավորվում է համաձայնեցման:

## *Նախահաշվային մաս*

Փորձաքննության է ներկայացված ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ (Վերին Դվին) համայնքում գտնվող Դվին հնավայրի բնակելի հատվածի (տան) ամրակայման, նորոգման, վերականգնման,

օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման աշխատանքների նախահաշվի գնահաշվարկը՝ 9 595.64 հազ. դր. նախահաշվային արժեքով:

Ըստ կատարված ուսումնասիրության, նախահաշիվները կազմված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն՝ նախագծային ծավալների հիման վրա:

Աշխատավարձի և մեքենաների շահագործման արժեքները հաշվարկված են 1984թ. գնահաշվարկով և վերահաշվարկված են 2019թ. գներով ընդունելով 1ռ=1728.61՝ աշխատավարձի մասով, 1ռ=2765.48՝ մեքենա-շահագործման մասով:

Շին. նյութերի արժեքը վերցված է ՀՀ ֆինանսների նախարարության՝ 2019թ. ապրիլ ամսվա ինֆորմացիոն տեղեկագրից:

Այն շին.նյութերի, սարքավորումների արժեքները, որոնք բացակայում են ինֆ. տեղեկագրից, կապալառու կազմակերպությունը պետք է ներկայացնի համապատասխան հաշիվ ապրանքագրեր:

Նյութերի արժեքների վրա կիրառված է՝

- 7.00% տրանսպորտային ծախսեր,
- 5% նորմերում չնախատեսված այլ նյութերի ծախսեր,
- 2% պահեստավորման ծախսեր:

Ուղղակի ծախսերի վրա տրված է՝

- 13.3% վերադիր ծախսեր,
- 11% շահույթային ծախսեր:

Ըստ հավաք նախահաշիվների լիմիտավորված տոկոսադրույքների, ընդհանուր նախահաշվային արժեքը կազմում է. *9 595.64 հազ. դրամ*, այդ թվում ԱԱՀ *1 599.27 հազ. դրամ:*

Ըստ սույն փորձաքննության՝ շինարարության ընդհանուր արժեքը՝ *9 595.64 հազ. դրամ,* երաշխավորվում է հաստատման:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ փորձաքննությունը երաշխավորում է «Դվին հնավայրի բնակելի հատվածի (տան) ամրակայում, նորոգում, վերականգնում, օգտագործում և տարածքի մասնակի բարեկարգում, ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ (Վերին Դվին) համայնք հասցեում» նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ Շ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆ